



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 փետրվարի 2020 թվականի N 28

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ **որոշում եմ**.

1. Նոր Գեղի համայնքի վարչական տարածքում գտնվող Վահան Ռուբենի Մեծոյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր 07-048-0033-0005) 0,082 հա մակերեսով հողամասին տրամադրել հացե՝
Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Յուրի Երիցյան փողոց 35:
2. Դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե՝ հացեի գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 փետրվարի 2020 թվականի N 29

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՐՎԵՍՏԻ
ԴՊՐՈՑՈՒՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով՝

1. Սահմանել, որ.

1) Նոր Գեղի համայնքապետարանի ենթակայությամբ գործող արվեստի դպրոցում (այսուհետ՝ Դպրոց) արտադպրոցական դաստիարակության ծառայություններ են համարվում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլաններում ներառված դասաժամերի անցկացման այն նվազագույն քանակը, որը պարտադիր է ավարտական դասարանի տարեվերջի ստուգաթղթերին և ավարտական քննություններին մասնակցելու համար.

2) ուսումնական տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ից և ընթանում է 10 ամիս.

3) դպրոցներում ավարտական քննությունների վերջնաժամկետն է յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ը.

4) դպրոցում յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելությունը կազմակերպվում է մինչև հուլիսի 31-ը.

5) Նոր Գեղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի հ. 68-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված արտոնությունները կիրառվում են սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետներում դպրոց ընդունված երեխաների համար.

6) դպրոց ընդունված է համարվում այն երեխան, որի համար երեխայի օրինական ներկայացուցիչներից մեկը սույն որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետով սահմանված ժամկետներում դպրոց է ներկայացրել երեխայի անձնական գործում ներառվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հ. 1 հավելվածի, դպրոցի տնօրենի հետ կնքել է արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցման պայմանագիր՝ համաձայն հ. 2 հավելվածի և սույն որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետով սահմանված ժամկետներում վճարել է տեղական վճարը (ուսման վարձ).

7) դպրոց ընդունված, ուսումնական տարվա ավարտին հաջորդ դասարան փոխադրված, մեկ այլ դպրոցից դպրոց տեղափոխված, նույն դպրոցում բաժնից մեկ այլ բաժին տեղափոխված երեխաների հաշվառման նպատակով՝ դպրոցի տնօրենը կազմում է համապատասխան հրամաններ, որը համարակալվում է ըստ ամսաթվի, աճողական կարգով: Հրամանների հաշվառման նպատակով՝ դպրոցը վարում է հրամանագիրք, որը պետք է լինի էջակալված, կարված և հաստատված տնօրենի կողմից: Հրամանների անցկացումը հրամանագրքում խմբավորվում են ըստ ամսաթվերի և հետևյալ խմբավորման տեսակների՝ ընդունման հրամաններ, դասարանից հաջորդ դասարան փոխադրման հրամաններ, բաժնից մեկ այլ բաժին, մեկ այլ դպրոցից դպրոց տեղափոխությունների հրամաններ, ավարտաձևերի և դպրոցից դուրս եկածների հրամաններ.

8) դպրոցի տնօրենը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 16-ը (եթե 15-ը համարվում է ոչ աշխատանքային օր՝ ապա 15-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը), իսկ 2020 թվականի հունվար-հունիս ամիսների համար՝ մինչև 2020 թվականի փետրվարի 16-ը՝ Նոր Գեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում դպրոցի տնօրենի կողմից ստորագրված և կնքված՝ ըստ

վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն հ. 3 հավելվածի։

9) դպրոցի տնօրենը՝ մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 16-ը (եթե 15-ը համարվում է ոչ աշխատանքային օր՝ ապա 15-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը), իսկ 2020 թվականի հունվար-հունիս ամիսների համար՝ մինչև 2020 թվականի փետրվարի 18-ը՝ Նոր Գեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում դպրոցի տնօրենի կողմից ստորագրված և կնքված՝ դասատուների տարիֆավորակավորման ցուցակ՝ համաձայն հ. 4 հավելվածի։

10) արտադպրոցական դաստիարակության ծառայությունների դիմաց Նոր Գեղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի հ. 68-Ն որոշմամբ սահմանված մեկ երեխայի հաշվարկով տեղական վճարները (ուսման վարձ) Նոր Գեղի համայնքի բյուջեի համապատասխան հաշվեհամարին վճարվում է յուրաքանչյուր ամսվա համար մինչև ընթացիկ ամսվա 15-ը (եթե 15-ը համարվում է ոչ աշխատանքային օր՝ ապա 15-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը), բացառությամբ 2020 թվականի հունվար ամսվա վճարի, որի վճարման ժամկետն է՝ մինչև 2020 թվականի փետրվարի 5-ը։

11) եթե երեխան ընտրում կամ արդեն իսկ ստանում է ուսումնական պլանով սահմանված ամբողջական ծավալով (բոլոր առարկաների ուսուցում) մեկից ավելի արտադպրոցական դաստիարակության ծառայություններ (օրինակ՝ դաշնամուրի բաժին և կերպարվեստի բաժին), ապա վճարումը կատարվում է ըստ յուրաքանչյուր ծառայության համար Նոր Գեղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի հ. 68-Ն որոշմամբ սահմանված մեկ երեխայի հաշվարկով տեղական վճար։

12) տեղական վճարը սահմանված ժամկետում չվճարելու կամ մասնակի վճարելու դեպքում դպրոցի տնօրենը 3 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի կողմին ուղարկում է ծանուցում՝ արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցման պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու մասին, կազմելով երեխայի ազատման համապատասխան հրաման։

13) երեխայի օրինական ներկայացուցչի կողմից ծառայություններից հրաժարվելու դեպքում, առաջանցիկ ամսվա կամ ամիսների համար վճարված գումարները ենթակա են ետ վերադարձման, եթե ծառայություններից հրաժարվելու մասին դիմումը մուտք է եղել դպրոց, վճարում կատարած ամսվան նախորդող ամսվա վերջին աշխատանքային օրը։

14) դպրոցի տնօրենը յուրաքանչյուր եռամսյակ, մինչև հաջորդ ամսվա 16-ը (եթե 15-ը համարվում է ոչ աշխատանքային օր՝ ապա 15-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը), Նոր Գեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում սովորող և վճարները կատարած երեխաների թվաքանակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն ըստ բաժինների՝ համաձայն հ. 5 հավելվածի։

2. Սույն որոշման պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ Նոր Գեղի համայնքապետարանի ենթակայությամբ գործող արվեստի դպրոցի տնօրենը ենթակա է կարգապահական պատասխանատվության։

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Նոր Գեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի և Նոր Գեղի համայնքապետարանի ենթակայությամբ գործող արվեստի դպրոցի տնօրենի վրա։

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Նոր Գեղի համայնքի ղեկավարի տեղակալ Տ. Բարսեղյանի վրա։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ։

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. փետրվար 1


գ. Նոր Գեղի

Ցանկ

Երեխայի անձնական գործում ներառվող փաստաթղթերի

1. Դիմում՝ ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից:
2. 2 հատ լուսանկար /3X4/:
3. Երեխայի ծննդյան վկայականի պատճենը:
4. Ծնողի անձնագրի պատճենը՝ գրանցման էջով կամ անձնագրային բաժնից գրանցման տեղեկանք:
5. Ծնողի և դպրոցի միջև կնքվող պայմանագիրը / նմուշը կցվում է /:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Կ.ԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Պայմանագրի N

(Արտադարձրողական դաստիարակչական ծառայությունների մատուցման մասին)

գ. Նոր Գեղի

<<____>> 2020թ.

<<<< Կոտայքի մարզի Նոր Գեղիի Ֆրոնտիկ Թևոսյանի անվա ն արվեստի դպրոց>> ՀՈԱԿ (այսուհետև՝ Դպրոց)՝ ի դեմս Դպրոցի տնօրենի պաշտոնակատար՝ Լուսինե Ղազարյանի, ով գործում է Դպրոցի կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ բաժնի, դասարանի աշակերտ _____-ի _____ օրինական ներկայացուցիչ _____-ը (այսուհետև՝ Ներկայացուցիչ) մյուս կողմից, համատեղ կոչվելով կողմեր, իսկ առանձին՝ կողմ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1. Սույն պայմանագրի համաձայն՝ Դպրոցը մատուցում է ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ուսումնական տարվա համար հաստատված օրինակելի ուսումնական պլանով արտադարձրողական դաստիարակության ծառայություններ, իսկ Ներկայացուցիչը վճարում է Նոր Գեղի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված համապատասխան ծառայության տեսակի տեղական վճարը:

2. Կողմերի փոխհարաբերությունները

1. Կողմերը ղեկավարվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, Նոր Գեղի համայնքի ավագանու, Նոր Գեղի համայնքի ղեկավարի որոշումներով, Դպրոցի կանոնադրությամբ, Դպրոցի ներքին կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

2. Դպրոցը պարտավոր է

1. Մինչև սույն պայմանագիրը սահմանված կարգով կնքելը մյուս կողմին ծանոթացնել ուսումնական ծառայությունների ցանկին, Նոր Գեղի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված տեղական վճարների չափերին, Նոր Գեղի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 1-ի «Նոր Գեղի համայնքապետարանի ենթակայության արվեստի դպրոցում երեխաների ընդունելության կազմակերպման, հաշվառման և վճարների մասին» N 29 որոշմամբ սահմանված դրույթներին, ծառայությունների մատուցման պայմաններին և վճարման կարգին, Դպրոցի Կանոնադրությանը և ներքին կանոնակարգին:

2. Կազմակերպել աշակերտի ուսուցում՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հաստատված օրինակելի ուսումնական պլանով սահմանված պարտադիր առարկայական ծրագրերի:

3. Աշակերտի համար ստեղծել ուսումնառության գործընթացն ապահովող հնարավոր բոլոր պայմանները:

4. Փոխադրել աշակերտին մեկ այլ ուսուցչի դասարան՝ աշակերտի կամ Ներկայացուցչի հիմնավորված պահանջով (ուսումնական տարվա սկզբին)։

5. Աշակերտին հանձնել ավարտական վկայական՝ աշակերտի կողմից ուսումնական ծրագրերը կատարելու և ավարտական քննությունները դրական գնահատականներով հանձնելու դեպքում։

3. Դպրոցն իրավունք ունի՝

1. Աշակերտի կողմից Դպրոցի ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները չկատարելու, ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու, Դպրոցի ներքին Կանոնակարգը խախտելու, Ներկայացուցչի կողմից Նոր Գեղի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 1-ի «Նոր Գեղի համայնքապետարանի ենթակայության արվեստի դպրոցում երեխաների ընդունելության կազմակերպման, հաշվառման և վճարների մասին» N 29 որոշմամբ սահմանված ժամկետում տեղական վճարը չվճարելու դեպքերում աշակերտին հեռացնել դպրոցից միակողմանի լուծելով սույն պայմանագիրը։

4. Ներկայացուցիչը պարտավոր է՝

1. Ուսման վարձավճարը վճարել Նոր Գեղի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 1-ի «Նոր Գեղի համայնքապետարանի ենթակայության արվեստի դպրոցում երեխաների ընդունելության կազմակերպման, հաշվառման և վճարների մասին» N 29 որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետով սահմանված ժամկետում։

2. Ապահովել աշակերտի մասնակցությունը ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները, կանխարգելել բացակայությունները։

3. 30 օր առաջ տեղեկացնել Դպրոցին դուրս գալու դեպքում։

4. Հատուցել իր, ինչպես նաև աշակերտի կողմից Դպրոցին պատճառված նյութական վնասը։

5. Համագործակցելու Դպրոցի հետ աշակերտին դաստիարակելու և սովորեցնելու հարցում։

ա. դրսևորել հարգալից վերաբերմունք Դպրոցի մանկավարժների և այլ աշխատակիցների նկատմամբ։

բ. խնամքով և հոգատարությամբ վերաբերվել դպրոցի գույքին։

գ. Առաջնորդվել Նոր Գեղի համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 1-ի «Նոր Գեղի համայնքապետարանի ենթակայության արվեստի դպրոցում երեխաների ընդունելության կազմակերպման, հաշվառման և վճարների մասին» N 29 որոշմամբ սահմանված դրույթներով, կատարել դպրոցի կանոնադրությամբ և Ներքին կանոնակարգով նախատեսված այլ պարտականություններ։

2.5 Ներկայացուցիչն իրավունք ունի՝

1) Բողոքարկելու Դպրոցի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

3. Ուսման վարձը

3.1 Տեղական վճարը յուրաքանչյուր ուսումնական տարվա (տևողություն՝ 10 ամիս) կազմում է ամսական _____ դրամ։

(գումարը թվերով և տառերով)

3.2 արտադպրոցական դաստիարակության ծառայությունների դիմաց Նոր Գեղի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված մեկ երեխայի հաշվարկով տեղական վճարները (ուսման վարձ)

վճարվում է յուրաքանչյուր ամսվա համար մինչև ընթացիկ ամսվա 6-ը (եթե 5-ը համարվում է ոչ աշխատանքային օր՝ ապա 5-ին հաջորդող առաջին աշխատանքային օրը), բացառությամբ 2020 թվականի հունվար ամսվա վճարի, որի վճարման ժամկետն է՝ մինչև 2020 թվականի հունվարի 16-ը:

3.3 Տեղական վճարը վճարվում է Նոր Գեղի համայնքի գանձապետական հաշվեհամարին՝ վճարման պահանջագրի վճարման նպատակը մասում պարտադիր նշելով դպրոցի անվանումը, երեխայի անունը ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, արտադպրոցական ծառայության տեսակը (մասնագիտական բաժին) սույն պայմանագրի համարը, դասատուի անունը, ազգանունը:

3.4 Առաջանցիկ վճարում կատարելու դեպքում անհրաժեշտ է նշել նաև այն ամիսները, որոնց համար կատարվում են վճարումները:

3.5 Ներկայացուցչի կողմից ծառայություններից հրաժարվելու, դեպքում, առաջանցիկ ամսվա կամ ամիսների համար վճարված գումարները ենթակա են ետ վերադարձման, եթե ծառայություններից հրաժարվելու մասին դիմումը մուտք է եղել դպրոց, վճարում կատարած ամսվան նախորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:

4. **Պայմանագրի գործողությունը ժամկետը և լուծման կարգը**

1. Սույն պայմանագիրն ուժի մեջ էմտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև _____:

2. Սույն պայմանագիրն համարվում է երկարաձգված Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, եթե գործողության ժամկետի ավարտից 30 օր առաջ կողմը չի դիմում այն լուծելու:

3. Սույն պայմանագրում փոփոխությունները կամ լրացումները կատարվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր, և հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ

2. Ներկայացուցչի կողմից միակողմանի՝ այդ մասին Դպրոցին, առնվազն 15 օր առաջ, տեղեկացնելու և փաստացի ծառայություններ մատուցված ամիսների դիմաց ուսման վարձն ամբողջությամբ վճարելու պայմանով:

3. Դպրոցի կողմից միակողմանի՝ նեչկայացուցչի կողմից սույն պայմանագրի 3-րդ գլխով սահմանված ժամկետում չվճարելու, աշակերտի կողմից Դպրոցի ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները չկատարելու, ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու, Դպրոցի ներքին Կանոնակարգը խախտելու դեպքերում՝ այդ մասին Ներկայացուցչին սույն պայմանագրի համաձայն նախապես տեղեկացնելու պայմանով:

5. **Եզրափակիչ դրույթներ**

1. Կողմն իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ազատվում է պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխագուշակել և կանխել:

2. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, էլեկտրոնային փոստով՝ սույն պայմանագրի վավերապայմաններում նշված էլեկտրոնային փոստի հասցեով՝ հանձնման (ստացման) մասին ծանուցմամբ, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ եղանակներով:

3. Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ համապատասխան:

4. Կողմերը պարտավորվում են վիճահարույց հարցերը լուծել փոխադարձ համաձայնությամբ, հակառակ դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

6. **Կողմերի իրավաբանական հասցեները, ստորագրությունները և այլ տվյալներ**

Դպրոց՝

Ստորագրություն

Կ.Տ

Ներկայացուցիչ՝ _____

Անձնագիր N _____

տրված է՝ _____ կողմից

հասցե՝ _____

Հեռախոս՝ _____

Էլ. Փոստի հասցե՝ _____

ստորագրություն

_____ 20 թ. _____

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՆՈՐ ԳԵՂԻ ԶՐՈՆՏԻ ԹԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ում սովորող երեխաների թվաքանակի վերաբերյալ

Z/Z	Բաժնի անվանումը	Դասարանի /գործիքի/ անվանումը	Սովորող և նոր ընդունված երեխաների թվաքանակ /2020 թ.-ի համար <<նոր ընդունվածներ>> սյունակը չի լրացվում				Պետական պատվերով		Ընդամենը		2-րդ գործիք սովորողները
			5000 ՀՀ դրամ ամսական՝ տեղական վճարի արտոնության կիրառմամբ	նոր ընդունվածները	սովորողները	սովորողները	նոր ընդունվածները	սովորողները	նոր ընդունվածները	սովորողները	
1	Դաշնամուր	Դաշնամուր									
2	ազգային նվագադրան	քանոն									
		դուդուկ									
		շվի									
		դեռ									
		ակորդեոն									
3	լարային	քամանչա									
		Ջութակ									
4	Երգեցողություն	Կիթառ									
		դասական փոկալ									
5	Պարարվեստ	Պար									
6	Կերպարվեստ	նկարչական									



Աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝

Կ.Հայրապետյան

ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՏԱՐԻՖԱՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՅՈՒՑԱԿ

[illegible]

Կ. Հայրապետյան

Հավելված N 5

Նոր Գեղի համայնքի ղեկավարի

2020 թվականի փետրվարի 1-ի N 29 որոշման


ՏԵՂԵԿԱԼՔ

<<ՆՈՐ ԳԵՂԻ ՖՐՈՆՏԻ ԲԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ում սովորող և վճարում կատարած երեխաների թվաքանակի _____ ամսվա համար վճարված գումարի չափի վերաբերյալ

</>	Բաժնի անվանումը	Դասարանի /գործիքի/ անվանումը	5000 ՀՀ դրամ ամսական՝ տեղական վճարի արտոնության կիրառմամբ			Տեղական վճարի նկատմամբ արտոնության նվազեցման կիրառմամբ			Պետական պատվերով			Ընդամենը			2-րդ գործիք սովորողները		
			միտղոմի վճարված	սովորողի վճարված	/իսկազմում />>/ միտղոմ	միտղոմի վճարված	միտղոմի վճարված	/իսկազմում />>/ միտղոմ	միտղոմի վճարված	միտղոմի վճարված	/իսկազմում />>/ միտղոմ	միտղոմի վճարված	միտղոմի վճարված	/իսկազմում />>/ միտղոմ	միտղոմի վճարված	միտղոմի վճարված	/իսկազմում />>/ միտղոմ
1	Դաշնամուրային	դաշնամուր քանոն															
2	ազգային նվագարան	դուդուկ 2վի դիոլ ակորդեոն քամանչա ֆուլթակ Կիթառ															
3	լարային	դասական վոկալ Պար															
4	Երգեցողություն	նվագարան															
5	Պարարվեստ	նվագարան															
6	Կերպարվեստ	նվագարան															

Աշխատանքի քաղաքականության պաշտոնական տարբերակ

Կ.Հայրապետյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 փետրվար 2020 թվականի N 30

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի և քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի 33-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Նոր Գեղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-048-0099-0002 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասում Ղևոնդ Գյուլասարյանի կողմից ինքնակամ կառուցված 7.43 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինություն և 0.97քմ մակերեսով պարիսպ շինությունը տրամադրել հասցե՝ Նոր Գեղի Առողջարանային փողոց 4/1:

2. Համարել օրինական և ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի սեփականություն:

3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ Նոր Գեղի համայնքի Առողջարանային փողոց 4/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ Նոր Գեղի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Ուժը կորցրած ճանաչել Նոր Գեղի համայնքի ղեկավարի 13.12.2019թ N 571 որոշումը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. փետրվարի 3
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 փետրվար 2020 թվականի N 31

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի վարչական տարածքում գտնվող Նոր Գեղի համայնքին պատկանող 07-048-0036-0002 կադաստրային ծածկագրով 0,0425 հա մակերեսով հողամասին տրամադրել հացե՝ Կոտայքի մարզ գ. Նոր Գեղի Ֆ. Թևոսյան 247 հողամաս:

2. Դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե՝ հացեի գրանցում կատարելու համար:

3. Ուժը կորցրած ճանաչել Նոր Գեղի համայնքի ղեկավարի 10.12.2019թ N563 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. փետրվարի 3

գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 փետրվար 2020 թվականի N 32


ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի N 88 որոշման պահանջներով որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի նորածին 3 /երեք/ երեխաների համար հատկացնել մինվազ օգնություն, ընդամենը՝ 210000 /երկու հարյուր տաս հազար/ դրամ, համաձայն հավելված N 1:

2. Նոր Գեղիի հետևյալ անապահով ընտանիքներին տալ դրամական օգնություն՝ 390000 /երեք հարյուր իննսուն հազար/ դրամ, համաձայն հավելված N 2:

3. Ընդամենը՝ 600 000 /վեց հարյուր հազար/ դրամ:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ.փետրվարի 3
գ. Նոր Գեղի

Հավելված 1
Նոր Գեղի համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 3-ի N 32 որոշման


ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻԱՆՎԱԳ ՕԳՆՈՒԹՅԱՆ

ՑՈՒՑԱԿ

N	Ազգանուն, անուն	գումար
1	Միքայել Լազարյան	30000
2	Առնակ Ասրյան	30000
3	Դավիթ Խաչատրյան	30000
4	Արշակ Հակոբյան	30000
5	Հովհաննես Խաչատրյան	30000
6	Ռազմիկ Սարգսյան	30000
7	Ռոմիկ Խուդոյան	30000
Ընդամենը /երկու հարյուր տասն հազար/		210000

Հավելված-2
Նոր Գեղի համայնքի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 3-ի N 32 որոշման

N	Ազգանուն, անուն	Գումար /դրամ/
1	Աճեմյան Ժիրայր	30000
2	Աճեմյան Արամ	30000
3	Ավանեսյան Նատալյա	15000
4	Բղեյան Անահիտ	40000
5	Գեղամյան Աննա	30000
6	Վարդանյան Արմինե	20000
7	Բակոյան Ասյա	15000
8	Խոնգարյան Հովիկ	15000
9	Մամիկոնյան Վանուհի	30000
10	Օզմանյան Շամիլ	30000
11	Հակոբյան Անահիտ	30000
12	Հակոբյան Ռուզաննա	30000
13	Մանվելյան Մարգարիտ	35000
14	Սարգսյան Նատալիա	40000
	ԸՆԴԱՄԵՆՆՆԸ/ ԵՐԵՔ ԽԱՐԺՈՐ ԻՆՆՍՈՒՆ ԽԱՂԱՐ/	390000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվար 2020 թվականի N 33

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 11-րդ, 17-րդ և 18-րդ կետերի, 2003թ-ի ապրիլի 17-ի N470-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ**.

1. Նոր Գեղի համայնքի Աղբյուրակի փողոց 1-ին նրբանցք թիվ 10 հասցեում գտնվող, Գարիկ Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ /կադաստրային ծածկագիր 07-048-0066-0026/ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0,7957 հա հողամասում ինքնակամ կառուցված 22,27 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 215.73 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունները ճանաչել օրինական:


2. Պարտավորեցնել Գարիկ Մխիթարյանին ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքի բյուջեի 900115104128 հաշվեհամարին վճարել 318587դրամ (երեք հարյուր տասնութ հազար հինգ հարյուր ութանասունևյոթ դրամ):

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Ծիսությունները կառուցված չեն ինժինեռատրաստպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների Էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
04 փետրվար 2019 թվականի N34

ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի 35-րդ կետի՝ որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի վարչական տարածքում գտնվող Սիմա Սմբատի Առաքելյանին պատկանող գույքը 07-048-0127-0003 կադաստրային ծածկագրով բաժանել մասերի և տրամադրել հասցե ըստ բաժանման սխեմայի:

1. Առանձնացող մաս S1-0.08200 հա հողամասին տրամադրել հասցե Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Ագատամարտիկների փողոց տուն 6:

2. Առանձնացող մաս S2- 0.08200 հա հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Ագատամարտիկների փողոց 6/1:

3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ հասցեի գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 փետրվար 2020 թվականի N 35

ՇԽՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19 N596-Ն որոշման Նոր Գեղի համայնքի ավագանու 25 դեկտեմբերի 2018 թվականի N 78-Ն որոշումը և Գրիգորի Մկրտչյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Գրիգորի Մկրտչյանին տրված 2017 թվականի դեկտեմբերի 12-ի N188 շինարարության թույլտվությունը՝ գյուղ Նոր Գեղի Հրաչյա Ներսիսյան փողոց 10 հասցեում բնակելի տան կառուցման թույլտվությունը երկարացնել նույն ժամկետով:
2. Գրիգորի Մկրտչյանը պարտավոր է Նոր Գեղի համայնքապետարանի 900115104177 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության երկարացման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. փետրվար 4
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 փետրվարի 2019 թվականի N 36

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի և քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի 33-րդ կետի պահանջներով՝ որոշում եմ.

1. Նոր Գեղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-048-0059-0067 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.00284 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 28.4 քմ մակերեսով ավտոտնակ շինությանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Ուսանողական փողոց 70/1:

2. Ինքնակամ շինությունները համարել օրինական և ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի սեփականություն:


3. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե՝ Նոր Գեղի համայնք Ուսանողական փողոց 70/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ Նոր Գեղի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2019թ. փետրվարի 05
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 փետրվար 2020 թվականի N37

ՍՈՒՐԵՆ ԵՍԱՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 5-րդ մասի և հիմք ընդունելով Սուրեն Եսայանի հայտը՝ **որոշում եմ**.


- Եսայան Սուրենին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Կոտայքի մարզ գյուղ Նոր Գեղի Ա. խանջյան փողոց 78 հողամաս (կադաստրային ծածկագիր 07-048-0112-0004) հասցեի հողամասում բնակելի տուն կառուցելու համար:
- Սուրեն Եսայանի
 - 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման
 - 2) կառուցապատման աշխատանքները սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգի N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Նոր Գեղի համայնքապետարան ներկայացնելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. փետրվարի 5

գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 փետրվար 2020 թվականի N38

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈԿՏԱՆՆԵՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Գեղի համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 7-ի N 53 որոշումը՝ **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Նոր Գեղի համայնքի Ֆ.Թևոսյան 225/14 հասցեում գտնվող, 07-048-0038-0102 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 0,00598 հա մակերեսով հողակտորը և հողակտորում ինքնակամ կառուցված և համայնքի սեփականության իրավունքը ճանաչված 38քմ (արտաքին մակերես՝ 38քմ) մակերեսով հասարակական շինությունը և 18,34 քմ մակերեսով ծածկը՝ կառուցապատող Հովհաննես Բաղդասարյանին ուղղակի վաճառքով օտարել:

2. Պարտավորեցնել քաղաքացի Հովհաննես Բաղդասարյանին 10-օրյա ժամկետում մուծել հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 1240638 (մեկ միլիոն երկու հարյուր քառասուն հազար վեց հարյուր երեսունութ) դրամ, որից՝ հողամասի համար՝ 175812 (հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր տասներկու) դրամ, շինության համար՝ 1064826 (մեկ միլիոն վաթսուչորս հազար ութ հարյուր քսանվեց) դրամ՝ վճարումը կատարել Նոր Գեղի համայնքապետարանի հետևյալ հաշվեհամարին 900115104128:

3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարների վճարումից հետո 10-օրյա ժամկետում վերջիններիս հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշման պահանջների իրականացման գործընթացի պատասխանատու նշանակել Նոր Գեղի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Արսեն Սամվելի Մկրտչյանին:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. փետրվարի 5

գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, +37494900906, norgeghi.kotayq@mta.gov.am


Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 փետրվար 2020 թվականի N 39

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Հանրաքվեի մասին>> սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ին նշանակված հանրաքվեի համար Նոր Գեղի համայնքում սահմանել երեք տեղամասային կենտրոններ՝ համաձայն հավելվածի:
